



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

30/08/2019

ՈՐՈՇՈՒՄ N 71-Ա

ԳՈՐԻՍԻ «Շ.ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՆԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասով, 22 կետով, 29 հոդվածով, 35 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 3-րդ մասով, 13 հոդվածի 2-րդ մասի դ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գորիսի «Շ.Ազնավուրի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1 «Գորիսի «Շ.Ազնավուրի անվան երաժշտական դպրոց» բառերը փոխարինել «ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Շ.Ազնավուրի անվան գեղարվեստի դպրոց» բառերով:

2. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Շ.Ազնավուրի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՐԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՐԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ *[Signature]*
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ *[Signature]*
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ *[Signature]*
ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ *[Signature]*
ՂԵՎՈՆԴՅԱՆ ՄԱՍԻՍ *[Signature]*
ՄԱՔՈՒՆՅ ՍԱՄՎԵԼ *[Signature]*
ՈՍԿԱՆՅԱՆ ՈՍԿԱՆ *[Signature]*
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2019թ. *սեպտեմբերի* « *2* »
ք. Գորիս

